ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

# ՈՐՈՇՈՒՄ

<<23>> հոկտեմբերի 2014 թ. N 205

ք. Արմավիր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՉՈՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 77.1-րդ և 77.2-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.37-րդ, 1.38-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2013 թվականի դեկտեմբերի 17-ի N159-Ա հրամանը.

*որոշում եմ՝*

1. Հաստատել 2014 թվականին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքներում իրականացվելիք վարչական հսկողության բնագավառը, ժամանակահատվածը և վարչական հսկողություն իրականացնող աշխատանքային խմբերի կազմերը՝ համաձայն NN1-3 հավելվածների:
2. Վարչական հսկողության իրականացման գործընթացում ղեկավարվել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2014 թվականի փետրվարի 10-ի N01/15/577-14 հանձնարարականով ներկայացված՝ համապատասխան ոլորտի պետական լիազորված մարմնի և իրավական հսկողության բարձրագույն մարմնի համատեղ հրամաններով հաստատված Հայաստանի Հանրապետության մարզպետների կողմից իրականացվող վարչական հսկողության հարցաշարով:
3. Անհրաժեշտության դեպքում վարչական հսկողության աշխատանքային խմբում ներգրավել մարզպետարանի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների այլ մասնագետների:

4. Մասնագիտական հսկողություն իրականացնելիս անհրաժեշտություն առաջանալու դեպքում աշխատանքային խմբում ներգրավել նաև մասնագիտական որակավորում ունեցող այլ անձանց (համաձայնությամբ):

5. Աշխատանքային խմբերի ղեկավարներին՝ յուրաքանչյուր համայնքում վարչական հսկողություն իրականացնելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում, իրավական հսկողության բարձրագույն մարմնի կողմից հաստատված օրինակելի ձևին համապատասխան կազմել արձանագրություն:

6. Մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին (Փ. Կարապետյան)՝ չորրորդ եռամսյակին հաջորդող ամսվա առաջին տասնօրյակում Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն ներկայացնել տվյալ եռամսյակում իրականացված վարչական հսկողության արդյունքում կազմված արձանագրությունները:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

*ՄԱՐԶՊԵՏ՝* *Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ*

*Հավելված N1*
*Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի*
*2014 թվականի հոկտեմբերի 23-ի*
*N205 որոշման*

**2014 թվականի չորրորդ եռամսյակի Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքներում իրականացվելիք վարչական հսկողության բնագավառը և վարչական հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի կազմը**

| հ/հ | Համայնքի անվանում | Իրականացվելիք վարչական հսկողության ժամանակահատվածը | Իրականացվելիք վարչական հսկողության բնագավառ | Վարչական հսկողություն իրականացնող պաշտոնատար անձիք | |
|---|---|---|---|---|---|
| | | | | Զբաղեցրած պաշտոն (աշխատանքային խմբի ղեկավար, անդամ) | Անուն, ազգանուն |
| 1. | Լեռնամերձ | 10 աշխատանքային օր | 1. Տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորությունների բնագավառ | Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի տեղակալ՝ աշխատանքային խմբի ղեկավար | Արամ Հովհաննիսյան |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | 2. հողօգտագործման բնագավառ | Աշխատանքային խմբի անդամներ՝ | |
| | | | | Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետ | Աբրահամ Մարտիրոսյան |
| | | | | Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության ՏԻ և համայնքային ծառայության հարցերի բաժնի գլխավոր մասնագետ | Գևորգ Գևորգյան |
| | | | | Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության գլխավոր մասնագետ | Սողոմոն Սարգսյան |
| 2. | Շահումյանի թ/ֆ | 10 աշխատանքային օր | 1. Տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորությունների բնագավառ | Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի տեղակալ՝ աշխատանքային խմբի ղեկավար | Արամ Հովհաննիսյան |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | 2. հողօգտագործման բնագավառ | Աշխատանքային խմբի անդամներ՝ | |
| | | | Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետ | Աբրահամ Մարտիրոսյան |
| | | | Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության ՏԻ և համայնքային ծառայության հարցերի բաժնի գլխավոր մասնագետ | Գևորգ Գևորգյան |
| | | | Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության գլխավոր մասնագետ | Սողոմոն Սարգսյան |
| 3. | Տալվորիկ | 10 աշխատանքային օր | 1. Տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորությունների բնագավառ | Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի տեղակալ՝ աշխատանքային խմբի ղեկավար | Արամ Հովհաննիսյան |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | 2. հողօգտագործման բնագավառ | Աշխատանքային խմբի անդամներ՝ | |
| | | | | Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետ | Աբրահամ Մարտիրոսյան |
| | | | | Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության ՏԻ և համայնքային ծառայության հարցերի բաժնի գլխավոր մասնագետ | Գևորգ Գևորգյան |
| | | | | Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության գլխավոր մասնագետ | Սողոմոն Սարգսյան |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ф. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Հավելված N9
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի
2014 թվականի հոկտեմբերի 23-ի
N 205 որոշման

2014 թվականի չորրորդ եռամսյակի Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքներում իրականացվելիք վարչական հսկողության բնագավառը և վարչական հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի կազմը

| հ/հ | Համայնքի անվանում | Իրականացվելիք վարչական հսկողության ժամանակահատվածը | Իրականացվելիք վարչական հսկողության բնագավառ | Վարչական հսկողություն իրականացնող պաշտոնատար անձիք | |
|---|---|---|---|---|---|
| | | | | Զբաղեցրած պաշտոն (աշխատանքային խմբի ղեկավար, անդամ) | Անուն, ազգանուն |
| 1. | Խանջյան | 10 աշխատանքային օր | 1. Տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորությունների բնագավառ | Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ՝ աշխատանքային խմբի ղեկավար | Հովհաննես Հարությունյան |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | 2. հողօգտագործման բնագավառ | Աշխատանքային խմբի անդամներ՝ | |
| | | | | Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության պետ | Արմեն Դարբինյան |
| | | | | Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ | Յուրի Մանվելյան |
| | | | | Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության ՏԻ և համայնքային ծառայության հարցերի բաժնի գլխավոր մասնագետի պաշտոնակատար | Նորիկ Իսախանյան |
| 2. | Արտիմետ | 10 աշխատանքային օր | 1. Տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորությունների բնագավառ<br>2. հողօգտագործման բնագավառ | Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ՝ աշխատանքային խմբի ղեկավար | Հովհաննես Հարությունյան |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | Աշխատանքային խմբի անդամներ՝ | |
| | | | | Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության պետ | Արմեն Դարբինյան |
| | | | | Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ | Յուրի Մանվելյան |
| | | | | Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության ՏԻ և համայնքային ծառայության հարցերի բաժնի գլխավոր մասնագետի պաշտոնակատար | Նորիկ Իսախանյան |
| 3. | Տարոնիկ | 10 աշխատանքային օր | 1. Տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորությունների բնագավառ | Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ՝ աշխատանքային խմբի ղեկավար | Հովհաննես Հարությունյան |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | Աշխատանքային խմբի անդամներ՝ | |
| | | | | Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության պետ | Արմեն Դարբինյան |
| | | | | Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ | Յուրի Մանվելյան |
| | | | 2. հողօգտագործման բնագավառ | Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության ՏԻ և համայնքային ծառայության հարցերի բաժնի գլխավոր մասնագետի պաշտոնակատար | Նորիկ Իսախանյան |
| 4. | Հայթաղ | 10 աշխատանքային օր | 1. Տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորությունների բնագավառ | Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ՝ աշխատանքային խմբի ղեկավար | Հովհաննես Հարությունյան |

| | | | |
|---|---|---|---|
| | | Աշխատանքային խմբի անդամներ՝ | |
| | | Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության պետ | Արմեն Դարբինյան |
| | | Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ | Յուրի Մանվելյան |
| | 2. հողօգտագործման բնագավառ | Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության ՏԻ և համայնքային ծառայության հարցերի բաժնի գլխավոր մասնագետի պաշտոնակատար | Նորիկ Իսախանյան |

***ԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝*** ***Փ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ***

*Հավելված N3*
*Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի*
*2014 թվականի հոկտեմբերի 23-ի*
*N 205 որոշման*

***2014 թվականի չորրորդ եռամսյակի Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքներում իրականացվելիք վարչական հսկողության բնագավառը և վարչական հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի կազմը***

| *հ/հ* | *Համայնքի անվանում* | *Իրականացվելիք վարչական հսկողության ժամանակահատվածը* | *Իրականացվելիք վարչական հսկողության բնագավառ* | *Վարչական հսկողություն իրականացնող պաշտոնատար անձիք* | |
|---|---|---|---|---|---|
| | | | | *Զբաղեցրած պաշտոն (աշխատանքային խմբի ղեկավար, անդամ)* | *Անուն, ազգանուն* |
| 1. | Քաղաք Էջմիածին | 15 աշխատանքային օր | 1. տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորությունների բնագավառ | Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ՝ աշխատանքային խմբի ղեկավար | Վարագդատ Մկրտչյան |
| | | | 2. քաղաքաշինության բնագավառ | Աշխատանքային խմբի անդամներ՝ | |
| | | | | Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ | Կարինե Դանիելյան |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | 3. հողօգտագործման բնագավառ | Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության ՏԻ և համայնքային ծառայության հարցերի բաժնի պետ | Գոռ Հովհաննիսյան |
| | | | | Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության գլխավոր մասնագետ | Սողոմոն Սարգսյան |
| | | | | Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի գլխավոր մասնագոտ | Լիաննա Հարությունյան |
| 2. | Ֆերիկ | 10 աշխատանքային օր | 1. Տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորությունների բնագավառ<br>2. հողօգտագործման բնագավառ | Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ՝ աշխատանքային խմբի ղեկավար | Վարազդատ Մկրտչյան |

| | | | |
|---|---|---|---|
| | | Աշխատանքային խմբի անդամներ՝ | |
| | | Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության ՏԻ և համայնքային ծառայության հարցերի բաժնի պետ | Գոռ Հովհաննիսյան |
| | | Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության գլխավոր մասնագետ | Սողոմոն Սարգսյան |
| | | Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի գլխավոր մասնագոտ | Լիաննա Հարությունյան |

ՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ֆ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ